

# ՔՈ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ՔՈ ՈՐՈՇՈՒՄՆ Է

## ԿԱՐԵՒՈՐ ՈՒՂԵՐՁՆԵՐ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Եվրոպայի խորհրդի «Երեխաների մասնակցությունն իրենց առողջության վերաբերյալ որոշումների կայացմանը» ուղեցույցից



# ՈՂՋՈՒՅՆ

Քո առողջությունը շատ կարևոր է:

Երբ դեռ երեխա ես, դեռևս չես կարող միայնակ որոշումներ կայացնել քո առողջության վերաբերյալ: Բայց դու իրավունք ունես մասնակցելու այդ որոշումների կայացմանը ճիշտ այնպես, ինչպես մյուս երեխաներն իրավունք ունեն մասնակցելու իրենց սեփական առողջությանը վերաբերող որոշումների կայացմանը:

Երբ քո առողջության մասին որոշում է կայացվում, սովորաբար ներգրավված են տարբեր մարդիկ.

## Դու

18 տարեկանից ցածր



### Քո ծնողները

Նրանք են հիմնական մարդիկ, ովքեր հոգ են տանում քո մասին: Երբեմն քեզ կարող է խնամել ուրիշ մեծահասակ, նրան ասում են «խնամակար»:

### Առողջապահության ոլորտի մասնագետները

Սրանք այն մարդիկ են, ովքեր օգնում են քեզ առողջ մնալ: Օրինակ՝ բժիշկները, բուժքույրերը, ատամնաբույժները կամ հոգեբանները: Քո առողջությունը վերաբերում է և՛ քո մարմնին, և՛ քո մտքին:

Այս գրքույկը պատմում է, թե ինչպես կարող ես մասնակցել քո առողջության հետ կապված որոշումների կայացմանը, և որքան կարևոր է, որ բժիշկները, բուժքույրերը և մյուս մեծահասակները քեզ ընդգրկեն որոշումների կայացման գործընթացում: Այն նաև բերում է օրինակներ, թե ինչ կարող են նրանք անել, որպեսզի ընդունվեն լավ և ճիշտ որոշումներ:

Դու կժանոթանաս որոշ կարևոր հարցերի, որոնք վերաբերում են որոշումների կայացման գործընթացին, այդ թվում

ԼՍՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ՔՈ ԻՐԱՎՈՒՆՔԸ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԵՒՈՐ Է

ՔՈ ԿԱՐԾԻՔԸ ԱՐՏԱՀԱՅՏԵԼԸ

ԲԱՑ ԵՒ ԱՊԱՀՈՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԾՆՈՂՆԵՐԻ ԴԵՐԸ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼԸ

ԱՆՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Գրքույկի վերջում կգտնես **լրացուցիչ տեղեկություններ**, այդ թվում **օգտակար սահմանումներ**, եթե ցանկանաս ավելի շատ իմանալ այս թեմայի մասին:



## ԼՍՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ՔՈ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Երբ դու այցելում ես բժշկի՝ հերթական զննման, արյան անալիզի կամ աչքի ստուգման համար, կամ երբ պետք է ստանաս հիվանդանոցային բժշկական օգնություն կամ վիրահատություն քեզ հետ միասին և քեզ համար կայացվում են տարբեր փոքր, երբեմն նաև մեծ որոշումներ:

Դու իրավունք ունես կիսվելու քո մտքերով և զգացմունքներով քո առողջության վերաբերյալ: Դու կարող ես ասել՝ ինչ ես ուզում կամ ինչ չես ուզում: Տարիքի սահմանափակում չկա և յուրաքանչյուր երեխա կարող է իր կարծիքը հայտնել, նույնիսկ փոքրիկ երեխաները կարող են ասել, թե ինչ են նախընտրում:

Լավ է, եթե սովորես քո կարծիքը արտահայտել բոլոր իրավիճակներում: Մեծահասակները, այդ թվում՝ բժիշկները և բուժքույրերը, պետք է օգնեն քեզ այդ գործում:

Ահա մի քանի օրինակ.




# ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԵՎՈՐ Է

Շատ կարևոր է հնարավորինս լավ հասկանալ քո առողջական վիճակը, նախքան կկարողանաս որոշել՝ ինչ կարծիք կազմել դրա մասին:

Մեծահասակները, հատկապես բժիշկները և բուժքույրերը, պետք է բացատրեն՝ ինչն է սխալ, ինչպես կարող են օգնել քեզ լավանալ, և որն է լինելու հաջորդ քայլը: Նրանք պետք է դա բացատրեն այնպես, որ դու հասկանաս: Յուրաքանչյուր երեխա առանձնահատուկ է, ուստի բացատրելու ձևը ևս կարող է տարբեր լինել: Այս տեղեկությունները կարող ես ստանալ ծնողիդ, բուժքրոջ կամ բժշկի հետ խոսելով:

Մեծահասակները պետք է համոզվեն, որ դու ամեն ինչ լավ ես հասկացել: Նրանք նաև պետք է բացատրեն՝ ով ով է, և ով ինչ է անում, հատկապես հիվանդանոցում, որտեղ կարող ես հանդիպել շատ տարբեր մարդկանց:



	Ինչ օգտակար բաներ է պետք իմանալ պրոցեդուրայից (զննում, բուժում, քննություն կամ միջամտություն) առաջ.
●	Որքա՞ն ժամանակ կտևի:
●	Ո՞վ կլինի ներկա:
●	Ինչպիսի՞ վայրում դա կկատարվի:
●	Ի՞նչ նյութեր կամ սարքավորումներ են օգտագործվելու:
●	Ի՞նչ քայլեր են լինելու:
●	Որո՞նք են օգուտները, ռիսկերը, այլընտրանքները:
●	Ի՞նչ ես ամենայն հավանականությամբ զգալու:
●	....

## ԲԱՑ ԵՎ ԱՊԱՀՈՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Տեղեկատվությունը շատ կարևոր է, քանի որ այն օգնում է քեզ ձևավորել կարծիք և ազդել քո առողջության վերաբերյալ որոշումների կայացման վրա: Այն պետք է փոխանցվի այնպես, որ դու քեզ **հարմարավետ և ապահով զգաս:**

Մեծահասակները այստեղ են՝ քեզ աջակցելու, օգնելու արտահայտել քո զգացմունքներն ու կարծիքները, մտածել ամեն ինչի մասին և ինքնուրույն եզրակացության գալ: Կան որոշումների կայացմանը ակտիվ մասնակցելու շատ ձևեր, **և առողջապահության ոլորտի մասնագետները կարող են քեզ օգնել՝ հարմարավետ զգալ և քաջալերել՝** : Եկե՛ք տեսնենք մի քանի օրինակ .

Ես քեզ ժամանակ և տարածք եմ տալիս, որպեսզի հասկանաս տեղեկությունը և որոշես՝ թե ինչպես ես վերաբերվում դրան:



Իմ աշխատասենյակը կահավորում եմ այնպես, որ այն չթվա անծանոթ կամ վախեցնող:

Փոքրիկների հետ ես օգտագործում եմ խաղալիքներ և խաղում նրանց հետ:

Ես լսում եմ քեզ և անկեղծ եմ քո հետ:



Քո զգացմունքներն ու մտքերը իմանալն ինձ օգնում է քո մասին ավելի լավ հոգ տանել :



Քո առողջության մասին տեղեկությունները կմնան քո, քեզ խնամող բուժաշխատողների և քո ծնողների կամ քեզ համար պատասխանատու մեծահասակների միջև:

**Որոշ տեղեկություններ լսելը դժվար կարող է լինել,** բայց մեծահասակները միշտ պետք է ասեն ճշմարտությունը: Նրանք պետք է բացատրեն հնարավոր վտանգները և ասեն, եթե ինչ-որ բան կարող է անհարմար կամ ցավոտ լինել:



**Երեխաները շատ բան են հասկանում** և հաճախ ցանկանում են հնարավորինս շատ իմանալ: Դա օգնում է նրանց պատրաստ լինել այն ամենին, ինչ սպասվում է:

## ԾՆՈՂՆԵՐԻ ԴԵՐԸ

**Քո ծնողները շատ կարևոր են, քանի որ նրանք աջակցում են քեզ:** Քո ծնողները կամ քեզ խնամող մարդիկ շատ լավ են ճանաչում քեզ և հաճախ գիտեն՝ ինչ անել և ինչպես օգնել, երբ դու այցելում ես բժշկի կամ հիվանդանոց:

Կարևոր է, որ ամեն ինչ քննարկես ծնողներիդ հետ և նրանց ասես, թե ինչ ես զգում, որպեսզի նրանք կարողանան քեզ աջակցել: **Շատ դեպքերում որոշումը, որը վերաբերում է քեզ, վերջնականապես ընդունում են ծնողներդ:**

Ինչպե՞ս ես քեզ զգում այսօր բժշկի մոտ այցից հետո:

Ի՞նչ բաների մասին ես դեռ մտածում կամ անհանգստանում:



Դու իրավունք ունես, որ ծնողներդ քո կողքին լինեն այցերի (որոնք կոչվում են «խորհրդատվություններ»), բուժումների ժամանակ կամ երբ պետք է մնաս հիվանդանոցում: Եթե ծնողներդ կամ խնամակալներդ չեն կարող ներկա լինել, կարող ես խնդրել, որ քեզ օգնի մեկ ուրիշ մեծահասակ, որին վստահում ես:

Կարո՞ղ եմ միայնակ հանդիպել բուժքրոջ կամ բժշկի հետ, եթե ես դա ուզում եմ:



Հաճախ երեխաները ցանկանում են, որ ծնողները լինեն իրենց կողքին: Բայց եթե դու կուզես բուժաշխատողի հետ հանդիպել միայնակ, առանձնացված պայմաններում, դու իրավունք ունես դա խնդրելու:

## ՔՈ ԿԱՐԾԻՔՆ ԱՐՏԱՀԱՅՏԵԼԸ

Դու կարող ես **քո կարծիքն արտահայտել տարբեր ձևերով**. կարող ես խոսել, գրել կամ նույնիսկ նկարել: Երբեմն մենք ցույց ենք տալիս, որ համաձայն ենք, պարզապես մեր վարքով՝ առանց բառերի: Օրինակ՝ երբ դու ձեռքդ ես պարզում արյան ճնշումը չափելու համար, դա նշանակում է, որ համաձայն ես: Հետևաբար, բուժաշխատողները պետք է ուշադրություն դարձնեն նաև **մարմնի լեզվին**, հատկապես այն երեխաների, ովքեր չեն կարողանում խոսել:



Երբեմն բուժաշխատողը **քեզ բանավոր կհարցնի՝** արդյոք համաձայն ես և հետո կարող է քո պատասխանը գրանցել բժշկական քարտում:

Որոշ դեպքերում դու և/կամ ծնողներիդ պետք է **ստորագրեք հատուկ ձևաթղթի տակ** կամ գրավոր արտահայտես՝ ինչ ես ուզում և ինչ չես ուզում, ավելի պաշտոնական ձևով:

Մեծահասակները այստեղ են, որ օգնեն քեզ՝ արտահայտելու քո կարծիքը: Բայց նորմալ է նաև ասել, որ վստահ չես կամ նախընտրում ես, որ ծնողներիդ որոշեն քո փոխարեն:



## ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼԸ

Լավ որոշումն այն է, երբ այն քննարկվում է, երբ այն օգտակար է երեխայի համար և հաշվի է առնում երեխայի ցանկությունները:

Այլ կերպ ասած, երբ մեծահասակները որոշում են ընդունում քո առողջության վերաբերյալ, **նրանք պետք է մտածեն, թե ինչ էս դու ուզում և ինչ էս մտածում:** Սա նշանակում է, որ նրանք պարտավոր են լսել քեզ և լրջորեն վերաբերվել քո խոսքին: Նրանք պետք է մտածեն, թե ինչպես իրենց որոշումները կազդեն քեզ վրա և անեն այն, ինչ լավագույնն է քեզ համար՝ և՛ հիմա, և՛ ապագայում:

**Ինչքան մեծանում ես, այնքան ավելի շատ էս հասկանում և ավելի ակտիվ կարող էս մասնակցել** որոշումների կայացմանը: Այդ պատճառով քո կարծիքն ավելի մեծ «կշիռ» կունենա ժամանակի ընթացքում: Բայց դա չի նշանակում, որ փոքրիկ երեխայի կարծիքը կարևոր չէ:



## ԱՆՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լավ որոշումը պահանջում է, որ բոլոր ներգրավված մարդիկ միասին խոսեն և լսեն միմյանց՝ լավագույն լուծումը գտնելու համար:

Բայց կարող են լինել իրավիճակներ, երբ երեխաների վերաբերյալ որոշումներ ընդունող մարդիկ **տարբեր կարծիքներ** ունեն: Օրինակ՝ դու կարող ես համաձայն չլինել ծնողներիդ հետ, կամ ծնողներիդ կարող են համաձայն չլինել բուժաշխատողների հետ:

Քո կարծիքին լրջորեն վերաբերվելը միշտ չի նշանակում, որ վերջնական որոշումը կլինի այն, ինչ դու ես ուզում կամ ամենը, ինչ դու կուզեիր: Երբեմն հնարավոր է՝ դա չլինի: Բայց առողջապահության ոլորտի մասնագետները, փնտրելով քեզ համար ամենալավ լուծումը, **պետք է հաշվի առնեն քո նախընտրությունները**, իմանան՝ ինչ պետք է հաստատ չանեն և փորձեն հնարավորինս հարգել քո ցանկությունները:

Բոլոր դեպքերում **քեզ պետք է ասեն ճշգրիտ, թե ինչ է որոշվել և ինչու:**

Ես կուզենայի բուժում ստանալ իմ ծննդյան օրվանից հետո:



Ես հասկանում եմ և կուզենայի, որ այդպես կազմակերպվեր, բայց քո ծննդյան օրը դեռ մի քանի ամիս անց է, և եթե այդքան սպասենք, բուժումն արդեն լավագույն արդյունք չի տա:

Իսկ եթե այս տարի ծննդանդ օրը նշենք մի քիչ ավելի շուտ: Կարող ենք կազմակերպել մի գեղեցիկ տոն նախքան բուժումը: Եկե՛ք միասին ընտրենք օրը:

Եկե՛ք տեսնենք, ինչ կարելի է անել բարդ իրավիճակներում, երբ մարդիկ համաձայն չեն կամ տարբեր կերպ են մտածում:



**Մենք քննարկում ենք իրավիճակը միասին՝ քեզ և ծնողներիդ հետ, անհրաժեշտության դեպքում՝ մի քանի անգամ, որպեսզի գտնենք հարմար լուծում:**

Շատ դեպքերում դա բավական է խնդիրը լուծելու համար:



**Եթե անհրաժեշտ է, կարող է ներգրավվել մեկ ուրիշ մարդ, որին անվանում են հաշտարար:**

Հաշտարարները օգնում են մարդկանց հասկանալ միմյանց դիրքորոշումները և միասին լուծում գտնել՝ տարաձայնությունը վերացնելու համար:



**Որոշ հիվանդանոցներ ունեն հատուկ խորհուրդներ կամ հանձնաժողովներ, որոնք կարող են խորհուրդ տալ, եթե ներգրավված մարդիկ չեն կարողանում ընդհանուր լուծման գալ:**



**Բացառիկ դեպքերում կարող է ներգրավվել այն մարդը, ով պատասխանատու է երեխաների պաշտպանության համար (օրինակ՝ դատավորը), որպեսզի որոշում կայացնի:**



Այս բոլոր մարդիկ միշտ հաշվի կառնեն այն, ինչ լավագույնն է քեզ համար: Դա կոչվում է քո «**լավագույն շահը**»:

## ԷԼ Ի՞ՆՉՆ Է ԿԱՐԵՎՈՐ



### ՔՈ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ, ՔՈ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Կա երկու կարևոր փաստաթուղթ, որոնք վերաբերում են երեխաների իրավունքներին առողջապահության ոլորտում:

**ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան** բացատրում է բոլոր երեխաների իրավունքները, որպեսզի նրանք լավ կյանք ունենան իրենց ապրած բոլոր վայրերում և ապահով լինեն վտանգներից:

Առողջապահության վերաբերյալ այն ընդգծում է, որ երեխաներն իրավունք ունեն վայելելու հնարավորինս լավ առողջական վիճակը: Դա նշանակում է, որ երեխաները պետք է ստանան որակյալ բուժօգնություն և այն խնամքը, որն ամենալավն է նրանց համար:

Կոնվենցիայում նաև ասվում է, որ երեխաներն իրավունք ունեն մասնակցել իրենց վերաբերող որոշումներին կյանքի տարբեր ոլորտներում: Դա նշանակում է, որ երեխաներն իրավունք ունեն արտահայտել իրենց կարծիքը, ներառյալ իրենց առողջության և բարեկեցության հարցերում, և իրավունք ունեն լսվելու և լրջորեն ընդունվելու:

Այս իրավունքները վերաբերում են բոլոր երեխաներին՝ անկախ նրանից, թե որտեղից են նրանք, ինչ տեսք ունեն, ինչ լեզվով են խոսում, ովքեր են նրանց ծնողները կամ ունեն, թե ոչ հաշմանդամություն:

**Եվրոպայի խորհրդի Օվիեդոյի կոնվենցիան** նաև անդրադառնում է բժշկական միջամտություններին : Այն վերաբերում է մեծահասակներին և երեխաներին:

Այնտեղ ասվում է, որ ընդհանուր առմամբ, մարդիկ պետք է իրենց ազատ և իրազեկված համաձայնությունը տան, այսինքն՝ համաձայն լինեն միջամտությանը: Երեխաների դեպքում Կոնվենցիան նշում է, որ եթե Եվրոպայի խորհրդի անդամ երկրում օրենքը թույլ չի տալիս երեխային ինքնուրույն որոշել, միևնույն է երեխայի կարծիքը պետք է հաշվի առնվի՝ ըստ նրա տարիքի և հասունության: Բացի այդ, միջամտությունը կարող է իրականացվել միայն այն դեպքում, եթե այն լավ է երեխայի համար:



## ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐ, ՏԱՐԲԵՐ ԿԱՆՈՆՆԵՐ

Երկրներն ունեն իրենց հատուկ օրենքները, կանոններն ու մշակույթը: Որոշ երկրներում, քանի դեռ երեխան փոքր է, նրա ծնողները պետք է իրենց թույլտվությունը տան: Այլ երկրներում օրենքը թույլ է տալիս, որ ավելի մեծ երեխաները՝ օրինակ 15 կամ 16 տարեկանից սկսած, կամ երբ բավականաչափ հասուն են, կարողանան իրենց առողջության մասին պաշտոնապես որոշումներ կայացնել միայնակ: Սա կոչվում է «համաձայնություն»:

Բայց հիշի՛ր, բոլոր դեպքերում և բոլոր երկրներում՝ երեխային պետք է բացատրենի՞նչ խնդիր կա, և ի՞նչ է պատրաստվում տեղի ունենալ: Պետք է հարցնեն ի՞նչ է նա մտածում:

Նույնիսկ այն երեխան, որին պաշտոնապես թույլատրված է որոշում կայացնել, դեռ կարիք ունի աջակցության և խորհրդատվության. դա չի նշանակում, որ նա մենակ է մնում:

## ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՎՐԱ ԱԶԴԵԼԸ

Այս գրքուկը բացատրում է, թե ինչպես դու և մյուս երեխաները իրավունք ունեն մասնակցել առողջապահության ոլորտի այն որոշումների կայացմանը, որոնք ուղղակիորեն վերաբերում են իրենց:



Բայց երեխաները և նրանց խմբերը կարող են նաև արտահայտել իրենց կարծիքը իրենց երկրի օրենքների վերաբերյալ: Նրանք կարող են մասնակցել առողջապահական ծառայությունների պլանավորմանը կամ նույնիսկ մասնակցել առողջապահության ոլորտի մասնագետների վերապատրաստման դասընթացների կազմմանը և կազմակերպմանը:

Եթե երեխաների հետ խորհրդակցեն առողջապահության ոլորտի քաղաքականության մշակման կամ օրենքների նախագծերի շուրջ, բոլորը կշահեն ավելի լավ որոշումներից:

## ՕԳՏԱԿԱՐ ԵԶՐՈՒՅԹՆԵՐ ԿԱՄ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՄԻՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

**Թույլտվություն կամ համաձայնություն.** պաշտոնական համաձայնություն բուժօգնություն ստանալու համար, որը տալիս են երեխայի ծնողները կամ խնամակալները, կամ՝ եթե տվյալ երկրի օրենքները թույլ են տալիս, հենց երեխան:

**Լավագույն շահ.** նշանակում է, որ մարդիկ միշտ պետք է մտածեն ի՞նչ ազդեցություն կունենա իրենց որոշումը երեխայի վրա և արդյո՞ք այդ որոշումն իսկապես լավագույնն է երեխայի համար:

**Երեխա.** 18 տարեկանից փոքր անձ: Մեծահասակները 18 տարեկանից բարձր են:

**Երեխաների մասնակցություն.** ապահովում է, որ երեխաները կարողանան իրենց կարծիքը հայտնել այն որոշումների մասին, որոնք վերաբերում են իրենց՝ անհատապես կամ որպես խումբ:

**Երեխաների իրավունքներ.** այն ամենը, ինչ յուրաքանչյուր երեխա պետք է ունենա կամ կարողանա անել: Գրեթե բոլոր երկրները համաձայնել են, որ երեխաներն ունեն հատուկ իրավունքներ, և կառավարությունները պարտավորվել են ապահովել, որ բոլոր երեխաները ստանան այն ամենն, ինչ իրենց անհրաժեշտ է՝ ապահով և լավ կյանք ունենալու համար:

**Եվրոպայի խորհուրդ.** եվրոպական կազմակերպություն, որը միավորում է 46 երկիր, որոնց կոչում են անդամ պետություններ: Այն ստեղծվել է, որպեսզի ապահովի, որ բոլոր երկրները պաշտպանեն մարդու իրավունքները, ներառյալ երեխաների իրավունքները՝ աջակցելով երեխաներին և երիտասարդներին լիարժեք զարգանալ և կանխելով ցանկացած վնաս:

**Առողջապահություն.** ընդհանուր եզր, որը վերաբերում է բժշկական օգնությանը. ներառում է բժշկին այցելությունը, բուժումը կամ միջամտություն ստանալը կամ հիվանդանոցում մնալը:

**Առողջապահության ոլորտի մասնագետներ.** բժիշկներ, բուժքույրեր, ատամնաբույժներ կամ հոգեբաններ, այսինքն՝ բոլոր նրանք, ովքեր աշխատում են առողջապահության ոլորտում:

**Կառավարություններ.** այն անձինք, ովքեր կազմում և կիրառում են երկրի կամ հասարակության կանոնները: Ազգային մակարդակում կառավարությունը մեծ համակարգ է, որը ներառում է բազմաթիվ հաստատություններ և ղեկավարներ, օրինակ՝ օրենսդիրներ (օրենքներ կազմող մարդիկ), վարչական մարմիններ (հասարակության գործարկմանը և ծառայություններին աջակցողներ), դատական համակարգ (դատարաններ, որտեղ դատավորները լուծում են վեճերը, խնդիրները և արդարությունը հաստատում հանցագործությունների դեպքում):

**Լիազոր ներկայացուցիչ.** այն անձը, ով երեխային ներկայացնում է իրավական առումով՝ ծնողները կամ, եթե ծնողները չեն կարող ներկա լինել, իրավական խնամակալը:

**ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա.** կարևոր փաստաթուղթ, որը թվարկում և բացատրում է երեխաների բոլոր իրավունքները, ինչպես նաև կառավարությունների պարտավորությունները: Բոլոր իրավունքները փոխկապակցված են, հավասարապես կարևոր և չեն կարող վերցվել երեխայից:

# ԻՆՉՈ՞Ւ ԱՅՍ ԳՐՔՈՒՅԿԸ

2024 թվականին Եվրոպայի խորհուրդը հրապարակեց ուղեցույց՝ «Երեխաների մասնակցությունն իրենց առողջության վերաբերյալ որոշումներում» թեմայով:

Այն գրվել է բժիշկներին, բուժքույրերին և մյուս մեծահասակներին օգնելու համար՝ ընդունելու երեխայի առողջության պաշտպանության համար լավագույն որոշումները: Այն ցույց է տալիս, թե ինչպես կարելի է ներգրավել երեխային և պարունակում է օգտակար խորհուրդներ և օրինակներ:



2024 թվականի աշնանը տարբեր երկրներից մի խումբ դեռահասներ՝ Դենիսը, Թրոստուրը, Լանան, Նիկը, Մոլլին, Դիոնը, Սարան, Լեոնարդոն, Քրիստինան, Ռայանը, Էլոդին, Սառան և Խոսեն, միասին աշխատեցին այս ամփոփագիրը պատրաստելու համար՝ քեզ և մյուս երեխաների համար:

Նրանց ցանկությունն էր օգնել երեխաներին հասկանալ իրենց իրավունքները և իմանալ, թե ինչպես կարող են մասնակցել իրենց առողջության վերաբերյալ կայացվող որոշումներին: Այս աշխատանքին աջակցել են «**Երեխաների իրավունքների միություն**» կազմակերպությունը և **Եվրոպայի խորհուրդը**:

**Երեխաների իրավունքների միություն** –ը անկախ, ոչ առևտրային կազմակերպություն է, որը հիմնադրվել է 1983 թվականին և այսօր համարվում է երեխաների իրավունքների ամենամեծ միջազգային ցանցերից մեկը՝ ավելի քան 120 անդամ և դիտորդ կազմակերպություններով:  
[www.childrightsconnect.org](http://www.childrightsconnect.org)

Այս նախագիծը 2024 թվականին ղեկավարել են Ժուժաննա Ռուտահին՝ երեխաների հոգաբարձության պատասխանատու և Իմեն Թալաուին՝ ջատագովության հարցերի պատասխանատու:



Եվրոպայի խորհուրդը եվրոպական կազմակերպություն է, որը միավորում է 46 երկիր, որոնց անվանում են անդամ պետություններ: Այն ստեղծվել է՝ ապահովելու, որ բոլոր այդ երկրները պաշտպանեն մարդու իրավունքները, ներառյալ երեխաների իրավունքները, օգնելու երեխաներին զարգացնել իրենց լիարժեք ներուժը և պաշտպանելու նրանց ցանկացած վնասից:

[www.coe.int](http://www.coe.int)



Սույն աշխատության մեջ արտահայտված կարծիքները պատկանում են հեղինակ(ներ)ին, և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպայի խորհրդի կամ Երեխաների իրավունքների միության՝ պաշտոնական քաղաքականությունը:

**Բնօրինակի վերնագիրը . Your Health, Your Say!  
(անգլերեն տարբերակ)**

Տեքստը կազմվել է և օգտագործվում է Եվրոպայի խորհրդի և Երեխաների իրավունքների միության թույլտվությամբ: Սույն փաստաթուղթը հրապարակվել է Եվրոպայի խորհրդի և Երեխաների իրավունքների միությանի հետ պայմանավորվածությամբ, բայց ամբողջական պատասխանատվությունը կրում է թարգմանիչ(ներ)ը / հրատարակիչ(ներ)ը:

# ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՈՎՔԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ԱՅՍ ԳՐՔՈՒՅԿԸ



Այս գրառումները նախատեսված են մեծահասակների համար՝ ծնողների, մանկավարժների, սոցիալական աշխատողների և առողջապահության ոլորտի մասնագետների, ովքեր կցանկանան այս գրքույկը օգտագործել երեխաների հետ՝ քննարկելու նրանց մասնակցությունը իրենց առողջության վերաբերյալ անհատական որոշումներում:

Գրքույկը կարելի է օգտագործել անկախ նրանից՝ երեխաներն իրականում բավական են առողջական իրավիճակի, թե ոչ, բժշկի կամ հիվանդանոցի այցից առաջ կամ հետո, կամ ցանկացած ժամանակ՝ թեմայի շուրջ ընդհանուր գաղափար ձևավորելու համար:

Դուք կարող եք երեխաների հետ այս թեման քննարկել անհատապես կամ խմբով: Գրքույկը գրվել է 9-ից 15 տարեկան երեխաների համար, սակայն այն կարող է հետաքրքիր լինել նաև ավելի մեծ տարիքի դեռահասների համար:

Եթե դուք աշխատում եք այնպիսի միջավայրում, որտեղ այս գրքույկը կարելի է ցուցադրել երեխաների համար մատչելի ձևով, կարող եք առաջարկել նրանց վերցնել մեկ օրինակ և հետո քննարկել այն ձեզ կամ այլ վստահելի մեծահասակների հետ:

Այս գրքույկը 2024 թվականին հրապարակված Եվրոպայի խորհրդի «Երեխաների մասնակցությունն իրենց առողջության վերաբերյալ որոշումներում» ուղեցույցի ամփոփումն է: Այն նպատակ ունի տեղեկատվություն և խորհուրդներ տրամադրել, հիմնականում առողջապահության ոլորտի մասնագետներին, թե ինչպես ներգրավել երեխաներին իրենց առողջության վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում:



Ուղեցույցը սկսվում է տեսական և իրավական միջավայրի ներկայացմամբ, ապա նկարագրում է որոշումների կայացման գործընթացի կարևոր բաղադրիչները՝ օգնելով հիմնականում առողջապահության ոլորտի մասնագետներին հասկանալ իրենց դերը երեխաներին, ընտանիքներին և այլ մասնագետներին աջակցելու գործում՝

երեխաների մասնակցությունը գործնականում իրականացնելու համար: Քննարկվում են համաձայնության, հավանության և լավագույն շահի հիմնական գաղափարները, ինչպես նաև առողջապահության ընթացիկ իրավիճակներ, որտեղ որոշումների կայացման մեջ մասնակցությունը երբեմն կարող է ընկալվել ավելի բարդ: Ուղեցույցի ողջ ընթացքում ներկայացվում են օրինակներ, ինչպես նաև լավ փորձի մասին հղումներ:

## ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԵՐՁՆԵՐԸ

Ստորև ներկայացված են փաստաթղթի ամենակարևոր եզրակացությունները: Երեխաների հետ քննարկումների ժամանակ կարող եք անդրադառնալ բոլոր ուղերձներին կամ կենտրոնանալ ամենակարևորների և տվյալ երեխայի իրավիճակին առավել համապատասխանների վրա:

### Լաված լինելու Քո իրավունքը

Ըստ ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 12-րդ հոդվածի՝ երեխաներն իրավունք ունեն մասնակցելու և ազդելու իրենց կյանքին, ներառյալ իրենց առողջությանը վերաբերող բոլոր որոշումների վրա: Դա ապահովում է, որ երեխաների լավագույն շահերը միշտ հաշվի առնվեն, և երեխաները ստանան հնարավորինս լավագույն բուժօգնություն:

### Տեղեկատվությունը կարևոր է

Երեխաները իրավունք ունեն ստանալու իրենց առողջության մասին տեղեկատվություն՝ այնպիսի ձևով, որ հասկանան այն: Տեղեկատվությունը պետք է լինի ճշգրիտ և բավարար, որպեսզի նրանք կարողանան տեղեկացված որոշումներ կայացնել:

### Բաց և ապահով հաղորդակցություն

Երեխաները իրավունք ունեն ստանալու աջակցություն՝ իրենց կարծիքը ձևավորելու և մեծահասակների հետ շփման ընթացքում ապահով զգալու համար: Նրանք նաև ունեն տեղեկությունների գաղտնիության իրավունք, ինչը նշանակում է, որ իրենց առողջության մասին տեղեկատվությունը չի կարելի կիսել ուրիշների հետ, եթե դա անհրաժեշտ չէ նրանց լավագույն շահերի համար:

### Ծնողների դերը

Երեխաների իրավունքն է, որ ծնողները գտնվեն իրենց կողքին բուժօգնություն ստանալու ընթացքում և օգնեն նրանց որոշումներ կայացնելու: Շատ դեպքերում ծնողներն են այն մարդիկ, ովքեր պաշտոնապես թույլտվություն են տալիս բժշկական միջամտության համար:

Կարող է պատահել, որ երեխան ցանկանա առանց ծնողների ներկայության քննարկել հարցերը կամ բուժօգնություն ստանալ:

### Քո կարծիքն արտահայտելը

Երեխաները իրավունք ունեն արտահայտվելու, և նրանց պետք է խրախուսել և աջակցել դրանում՝ անկախ տարիքից: Ոչ վերբալ արտահայտությունները, օրինակ՝ մարմնի լեզուն, նույնպես հաշվի են առնվում: Դա ճիշտ է բոլոր դեպքերում՝ անկախ համաձայնություն տալու կանոններից:

### Որոշումներ կայացնելը

Երեխաների կարծիքը պետք է հաշվի առնվի՝ նրա զարգացող կարողություններին համահունչ: Եթե վերջնական որոշումը չի համընկնում երեխայի ցանկության հետ, նրան պետք է բացատրել՝ ինչու է այդ որոշումն ընդունվել:

### Անհամաձայնություններ

Կարող են լինել տարբեր կարծիքներ և տարակարծություններ երեխայի, ծնողների կամ առողջապահության ոլորտի մասնագետների միջև: Նման խնդիրները հաճախ կարելի է լուծել լրացուցիչ քննարկումների միջոցով: Սակայն կարող են լինել անհամաձայնության այնպիսի դեպքեր, երբ անհրաժեշտ է ներգրավել լրացուցիչ անձի կամ մարմնի՝ որոշելու, թե որն է երեխայի լավագույն շահը:

### Լրացուցիչ տեղեկություններ

Այս բաժինը լրացուցիչ տեղեկություններ է տրամադրում, հատկապես համապատասխան իրավական փաստաթղթերի մասին: Այն նաև նշում է, որ երեխաները կարող են ներգրավվել ներպետական օրենքների և քաղաքականությունների մշակման և վերանայման գործընթացում:

## ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՔՍ

Ուղեցույցի թեման կարգավորվում է ներպետական օրենսդրությամբ և ենթաօրենսդրական ակտերով: Հնարավոր է ձեզ անհրաժեշտ լինի ուսումնասիրել ձեր երկրի իրավական դաշտը՝ կապված առողջապահական համակարգի, պացիենտների իրավունքների և երեխաների իրավունքների հետ, որպեսզի վստահ լինեք, որ կարող եք պատասխանել հարցերին:



Արդյո՞ք կա իմ երկրում երեխաների իրավունքների մասին օրենք: Արդյո՞ք այն նշում է նրանց մասնակցության մասին:



Արդյո՞ք կա իմ երկրում առողջապահության և պացիենտների իրավունքների մասին օրենք: Եթե այո, ապա ինչպե՞ս են այնտեղ սահմանված դրույթները՝ կապված երեխաների և նրանց մասնակցության հետ որոշումների կայացման գործընթացում, օրինակ՝ տեղեկացված լինելու իրավունքի, կարծիք ունենալու և այն հաշվի առնելու իրավունքի:



Արդյո՞ք կա տարիքային սահման, երբ երեխան կարող է պաշտոնապես համաձայնել բժշկական միջամտությանը՝ մինչև 18 տարեկանը: Եթե այո, ապա ի՞նչ չափորոշիչների հիման վրա (տարիք, հասունություն կամ այլ):



Արդյո՞ք կան այլ օրենքներ, կանոնակարգեր կամ ուղեցույցներ, որոնք վերաբերում են երեխաների մասնակցությանը նրանց առողջության հետ կապված որոշումների կայացման գործընթացում:



Արդյո՞ք կան ուղեցույցներ, որոնք վերաբերում են տարակարծությունների կամ անհամաձայնությունների դեպքերին. օրինակ՝ եթե երեխան / ծնողները կամ խնամակալները / առողջապահության ոլորտի մասնագետները միմյանց հետ համամիտ չեն: Ի՞նչ են դրանք նախատեսում:

